ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2018 թվականի հունիսի 30-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9ա դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Տարեկան գնահատականների և ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
2. Ծնողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվություն:
3. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում:

1. Լսեցին.

Դասղեկ Գոհար Ղազարյանի ելույթը: Նա նշեց, որ 2017-2018 ուստարվա ընթացքում 9ա դասարանում աշակերտների թվի փոփոխություն չի եղել: Տարեսկզբում եղել են 24 աշակերտ, և 24-ն էլ ավարտել են 9-րդ դասարանը: Տարեկան գնահատականներով դասարանի ուսման առաջադիմությունը կազմում է 100 %: Կան 2 գերազանցիկ (Սարգսյան Գեղամ Սարգսի, Վարդանյան Մայրանուշ Վանիկի) և 6 հարվածային (Առաքելյան Մարիամ Աշոտի, Ավետիսյան Նարեկ Սամվելի, Եղիազարյան Քրիստինե Գնելի, Խաչատրյան Սուսաննա Սարգսի, Մնացականյան Մարիամ Վաչագանի, Փանոսյան Տիգրան Սոսի) աշակերտներ:

Ընդհանուր բացակայությունը կազմում է 183 դասաժամ, որակական ցուցանիշը 33,3% է:

Ժողովի ընթացքում մանրամասնորեն ներկայացվեցին յուրաքանչյուր աշակերտի տարեկան գնահատականների ամփոփագիրը և բացակայությունը: Ամփոփիչ ձևով տեղեկացվեցին նաև քննությունների արդյունքները: Դրվատանքի ու գովեստի խոսքեր ասվեցին քննություններին լավ նախապատրաստված աշակերտների հասցեին, որոնք պատասխանատվության զգացումով հանձնեցին ավարտական բոլոր քննությունները:

Ե՛վ գրավոր, և՛ բանավոր քննություններն սկսվեցին ու ավարտվեցին ժամանակին, և դասարանի բոլոր աշակերտները փոխադրվեցին 10-րդ դասարան:

Քննություններից հետո առանց կորուստների և մաքուր վիճակով հավաքագրեցին ու հանձնեցին բոլոր դասագրքերը:

Դրական գնահատվեց նաև ավագներ Մարիամ Առաքելյանի ու Գեղամ Սարգսյանի կատարած աշխատանքը: Նրանք մեծ պատասխանատվությամբ են կատարել իրենց վրա դրված պարտականությունները՝ հետևելով դասարանի մաքրության, հերթապահության կատարման, գույքի, դասագրքերի և օրագրերի պահպանման, հաճախումների հաշվառման և այլ աշխատանքներին:

Նշվեցին նաև ուստարվա ընթացքում դասարանում կատարված բոլոր միջոցառումները՝ սպորտլանդիաներ, Ուսուցչի տոն, Գիրք նվիրելու և Մայրենիի տոն, «Մեր մեծերը» շարքից՝ «Զապել Եսայան-140», Մայիսի 9-ի տոնակատարություն և այլն: Այցելել են Հայաստանի պետական պատկերասրահ, դիտել ցուցահանդեսներ, կինոնկարներ և թատերական ներկայացումներ: Դասարանի աշակերտները մասնակցել են ինչպես դպրոցական, այնպես էլ տարածաշրջանային ու մարզային մրցույթ-օլիմպիադաների և արժանացել պատվոգրերի ու մրցանակների:

«Դասղեկի ժամ»-երի ընթացքում լսվել են զրույց-զեկուցումներ, քննարկվել բազմաթիվ բազմաթիվ հարցեր, որոնք նպաստել են ուսման առաջադիմության և աշակերտների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը:

Որոշեցին

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու ավարտական քննությունների ամփոփիչ արդյունքները, 2017-2018 ուստարում կատարված աշխատանքները, շնորհավորել աշակերտներին՝ 10-րդ դասարան փոխադրվելու կապակցությամբ:

2. Լսեցին

Ծնողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվությունը: Ծնողական խորհրդի նախագահ Տաթևիկ Բաբայանը խոսեց ծնողական կոմիտեի, իսկ աշակերտական խորհրդի նախագահ Սուսաննա Խաչատրյանը՝ աշակերտական խորհրդի կատարած աշխատանքների մասին:

Որոշեցին

Ե՛վ ծնողական, և՛ աշակերտական խորհուրդների նախագահների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

3. Լսեցին

Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

Դասղեկ Գ. Ղազարյանը նշեց էքսկուրսիայի կարևորությունը աշակերտների գիտելիքների և մակարդակի բարձրացման համար. դա բարձրացնում է նրանց ակտիվությունն ու ոգևորությունը, նպաստում աշխարհաճանաչողության զարգացմանը, դաստիարակում հայրենասիրությամբ, որովհետև լինելով բնության որևէ տեսարաժան վայրում, մոտիկից տեսնելով, ծանոթանալով պատմական հուշարձանի կամ տեղանվան պատմությանը՝ նրանք ավելի շատ տեղեկություններ են ստանում, շոշափելի ու իրական ձևով ընկալում ամեն ինչ, քան սովորական դասաժամերին:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը հարստացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Ինչպես մշակութային օջախներ, այնպես էլ էքսկուրսիայի հետ կապված զումարային խնդիրները պիտի կազմակերպվեն և լուծվեն ծնողական խորհրդի կողմից:

Որոշեցին.

Կազմակերպել էքսկուրսիա՝ Գեղաշեն- Բյուրական- Ամբերդ- Արագածի լիճ- Աշտարակ երթուղով հուլիսի 15-20-ին: Դասարանի ծնողական խորհրդի նախագահ Տաթևիկ Բաբայանը և խորհրդի մյուս անդամները կազմակերպեն և կատարեն էքսկուրսիայի հետ կապված բոլոր աշխատանքները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / / Տաթևիկ Բաբայան

Քարտուղար՝ / / Ս. Խաչինյան